

1. Գուրգէն Ա. Արիերեան թագաւորին զեռարգին կը համարուի Յովհ. Կաթ. ապ. Եր. էջ 387. Արիերեան (Գ.) կիւրացապատի եւ Դուռիք Մամիկանի մարտը երկու մարտընկերու ազդեցիկն եւ կուտ. Do admin. imp. էջ 207, 16 յլ.:

2. Յովհ. Կաթ. էջ 182:

3. Յովհ. Կաթ. էջ 183. Ժամանակագրութեան էջ 291 Դուռիք կիւրացապատ-թագաւորն է. որ 937ին մեռաւ:

4. Յովհ. Կաթ. էջ 252, 255:

5. Իւր թուց Գուրգէն Երիթաւ Երիթաւայ՝ Արիերեան (Գ.) կիւրացապատի որդւյն Էճճէլօրցը կը կուտի կուտ. էջ 209, 26:

6. Ժամանակագրութեան մէջ այս Դուռիք սերնդարեանութիւնը շատ չգիտի է, վասն զի մերթ Ասորւներեանց Երիթաւ Երիթաւայ, որքին կը համարի եւ մերթ Բագարաւ Մամիկան, վերջինս յամենայն զեզոսիալ է քանի որ Բագարաւ՝ ըստ կատանդիքի երբք որդի մնայն ունէր:

7. Կուտ. էջ 208, 11. 209, 3. 210, 7, 12/13, 213, 8/9: Վախուշտի թուականներուն համաձայն Արիերեան (Գ.) կիւրացապատէն յառաջ մեռած է. սակայն այ՝ ըստ կատանդիքի՝ առանց տարակոյտի սխալ է:

8. Յովհ. Կաթ. էջ 183, Կուտ. էջ 206, 9 յլ.:

9. Յովհ. Կաթ. էջ 379 (381):

10. Կուտ. էջ 207, 4, 17. 209, 18. 212, 4, 23 յլ. 213, 10, 20:

11. Կուտ. էջ 209, 18. 210, 9. 211, 12. 212, 4. 213, 6, 9:

12. Կուտ. էջ 204, 17/18, 24. 207, 5/6, 20:

13. Կուտ. էջ 210, 4. *Չորս եղբայր, Արիերեանց կիւրացապատի որդեք:

14. Կուտ. էջ 207, 20/21. 203, 16:

15. Կուտ. էջ 207, 8 յլ., 19 յլ.:

16. Hist. de la Géorgie, էջ 287, 292, 295. առոր հակառակ էջ 285, Բագարաւ Գ. կ'անուանուի Գեմետրի եւ Թեւզոսի — Գորդի Բ. Թեւզ — մեկ քրոջ որդին: [Բարբառի առաքելը կը ներկայացընէ Միթիթ ար Անկեցին աւ Արքանայ էջ 92, որ այս Գուրգէնը՝ Հայոց Աշոտ Գ. Աղբառն թագաւորին († 976) երբորք որդւյն հետ կը նշխարընէ: Սակայն այս ծանօթ չէ ժամանակակից Սա. Աստիկի. որ բացայայտ կերպով կրտսէ կը շատէ Հայոց Սիւրաւ Բ. Տիեզերակալ թագաւորին եղբայր Գորգէնը (Գ. Է. էջ 256) եւ Վրաց Բագարաւ թագաւորին որդին (Գ. Է. էջ 252, 10. 267, խա. 270) ու Ափրազաց (Սիւրաւ եւ) Բագարաւ թագաւորին չայր՝ Գուրգէնը (Գ. Է. էջ 252, խգ. 276):

Թրգմ. Հ. Մ. ՆԱՌԱՅԻՄ ԴՅԵ. Բ. ՄԱՐԿՈՒՍՈՍ

Ա.Ե.Բ.



Ս. ՅԱԿՈՒՐ
ԱԶԳԱՅԻՆ ՀԻՌՈՒԳՈՒՆՈՑ

(Հարուստ-Յիւս)

Հոգարարութեան փետր. 15 գումարման աստեագրութենէն կը տեսնուի որ Տիկին Տիրուհի ԱլլահՅիւրեանին բարեբարութենէն 12.000 Փրանք վերարժեական նոր սրահի մը կառուցման գործանելու արժանեղին ինչդրուէր է Ազգ. Վարչութենէ, եւ նա Մարտ 2 նամակաւ պատասխաններ է թէ չի կրնար անօրէնութիւն մ'ընել այդ մասին մինչեւ որ Հոգարարութիւնը չապահովէ Չամիչեան Օրիորդ Աննայի ցկեանս վճարելը 8%՝ ութ առ հարիւր ասիկայը, ինչպէս նաեւ յարկարածին աւարտման համար եղած եւ ըլլալիք փոխառութեանց անոնները, եւ չորոշէ թէ ինչի պիտի յատկացուի գլխաւորաբար այն մեծ գումարը (գ. Ս. 84, 89, 194) որուն հետեւեալ պատասխանը կը արուի:

Ս. ՅԱԿՈՒՐ Կատանդեւոյզլիտ,
ԱԶԳԱՅԻՆ ԱՆՆԵԱՆՈՑ 9 Մարտ 1906.
Ի ՐԱՆՍԱԼԻԻ

Արհիպապառ եւ Գերագոյնքա. Տէր
Չէր Արհիպապառ. Տէրութեան Մարտ 2 թուակիր գրութիւնը ընդունելու պատիւն ունեցանք, եւ Հոգարարութեան Մարտ անոյն 6ին գումարման մէջ կարացցուեցաւ:

Յիշեալ գրութեամբ Պատկաւելը Վարչական Ժողովը կը դիմէ որ Ս. Յակոբայ Հաստատութիւնս

1. Չամիչեան Հնորհայն Աննա Օրիորդի նուիրած 3000 օսմ. սովոյ.

2. Եղբրքեան Հնորհայն Տիրուհի Օրիորդին նուիրած 2185 օսմ. սովոյ 8%՝ ութ առ հարիւր ասիկաները, ինչպէս նաեւ յարկարածին կատարման համար եղած եւ ըլլալիք փոխառութեանց արուելիք ասիկաները (ընդ ամենը 600 օսմ. սովի) վճարելու հարկին տակ կը գանուի, որով Պատկաւելը Վրչ. Ժողովը նաեւ քան հաստատելու Հոգարարութեան որոշուութիւնը ի մասին շնորհեան վերահաստատելն արահին՝ կ'ուզէ կանխաւ գինւոյ 50.000 Փրանքի կիրառութեան համար Հոգարարութեան որոշուութիւնը:

Հոգարարութիւնս ուշի ուշով խորհրդակցելով կը փութայ պատասխանել թէ Չամիչեան Հնորհայն Աննա Օրիորդին արուելիք տարեկան 240 օսմ. սովոյ յարկարածին եկամուտէն պիտի արուի միշտ, ինչպէս նաեւ յարկարածին կատարման համար եղած եւ ըլլալիք փոխառութեանց արուելիք ասիկայը եւ դրամագլուխը, Վրչ. Ժողովոյ կողմանէ կարգուած յատուկ մասնաժողովը նոյն յարկարածին եկամուտէն պիտի վճարէ:

Կը մնայ միայն Հնորհայն Եղբրքեան Տիրուհի օրիորդին 50.000 Փրանքաց 176 օսմ.

սկի տարեկան տոկոսը՝ Հոգաբարձութիւնս սկզբունք ի վեր մտադիր նշուալ այս 50,000 Ֆրանքի գումարն յառկացնել Հաստատութեան մէկ ծիղղին բարձրման եւ հատկութիւնը գրութեան: Այս նպատակաւ որոշեց առ այժմ 12,000 Ֆրանք վերաբուժական սրահի շինութեան յառկացնել, եւ մնացած 38,000 Ֆրանքաց համար թէպէտ Հոգաբարձութիւնս ունի քանի մը Երազիր, բայց անոց գործազրութիւնը անհնար ըլլալով յարկաբաժնի եւ վերաբուժական սրահի շինութեանց հետ զոյգ յառաջ տանել, պատշաճ կը համարի առ այժմ յետահալ այս խնդիրս:

Հանգեց.ք. Արհիպապի. Գերապայծառ Տէր, ընդունել այս առթիւ Հոգաբարձութեանս ամենախորին յարգանաց հաւատարմութիւնս:

Ա. Արհիպապի. եւ Գեր. Տէր
Յոհան Արքեպիսկոպոս Հանձնատ
Ա.ժամեայ Կ. Պատրիարքական փոխանորդ

Ատենադպիր	Ատենապետ
Յով. Ծ. Ա. Արկիման,	Պետրոս Մահճարի
(Դ. Ա. Ս. Թ. Տր. 192)	

Իրականութիւնն այն է որ վերաբուժական գործողութեանց մտադրեալ սրահը դեռ չէ շինուած, հաճառակ տեղեկագրոյն Դոկոս. Անտոն Նաֆիլեան Պաշայի, զոր առած էր ըստ յանձնարարութեան Ազգ. Բարձր Վնկեանցին վերաբուժական սրահը քննելով՝ թէ այն չէ համապատասխան արդի գիտութեան պայմաններուն: Վասն զի ոչ Հոգաբարձութիւնը եւ ոչ ալ Արտաշէս Հիւրիզլի կրցած 240 սուկոյն վրայ նագարակիտ մ'անգամ աւելցնել, ուստի այս վերջինք Ժամօթ 240 սուկոն տարի մը ետքը՝ ընդհանուր բարեգործական Միութիւնս, ընկերութեան նուիրեց ընկանաբար նուիրատուին հաւանութեամբ: Հոգաբարձութիւնը սակայն պարագայից բերմամբ եթէ ձեռնողեցաւ վերաբուժական գործողութեանց սրահը նորոգ շինել, գունէ յարողեցաւ վերահաստութեան շատ մը նոր գրութեամբ գործիչներ բերել առ Պարիսի Charrière Collin եւ Gentile H. Luer գործարաններէն 15% տասնոհինգ առ հարիւր զեղջով Անկեանցին համար ըլլալ Դոկոս. Իսանձանի վկայութեամբ հաստատելով: Այս եղելութեանց վրայ Անկեանցին խորհուրդը 1906 Մարտ ամսոյն 25ին հաւաքական հրատարակիչ կը մատուցանէ Ազգ. Վարչութեան, որ կը հրահրէ զայն առաջին կայ նիստին անձամբ բացատրելու իր մղիչ պատճառները: Եւ ըստ այսմ Հոգաբարձութիւնը ուժ օր ետքը յատենի ժողովոյն պարզելով իր Տարեկացիչ պատճառները՝ Ազգ.

Վարչութիւնը կ'ընդունի անոր հրատարականը յանձնարարելով շարունակել իր պաշտօնը մինչեւ ցընտրութիւն նոր Հոգաբարձութեան, որ բաւական կը յապաղէ: Ուստի Մահճարի Պետրոս Ատենապետը Մայիս 3 գումարակով իր պաշտօնակիցները կը կարգաւ անոց Ապրիլ 29 թուականու նամակ մը, որով Ազգ. Վարչութիւնը կը յայտնէր իր հաւանութիւնը ընդունելու Ֆրէնկեան Եպիսկոպոսի գրամական նուէրը իր յարակից պայմանաւ, թէ նոյնին պաշտօնական սուղութիւնը կատարուեցաւ այս առաւօտի Կաթողիկոսարան Մէհրէմէի Ելրի. ի պաշտօնէից առջեւ, եւ թէ Օսմ. Դրամատունը յանձնուեցաւ յիշեալ նուէրը ի հաշիւ Անկեանցին, որուն 302 սուկոն եւ 6 գահճեկան հնչուն ստակ, իսկ 97 սուկոն եւ 94 գահճեկան էր 7 արծեթուղթ երկրպագական փոխառութեան (Crédit Foncier Egyptien) 1886 տարուց: Ատ լսելով Հոգաբարձուները կը փութան ի գիր շնորհակալութիւն յայտնել բարերարին, ինչպէս նաեւ Ցիկին Քաթուհույ, որ իրենց գերգաստանին գործակատար Շերպեթեան Օղոտի միջոցաւ Նոյ. 24ին առաջարկած էր 150 սով. սկի ստանալու համար անկողին մը կանանց հիւանդանոցին մէջ ի յիշատակ իր հանգուցեալ ամուսնոյն Պետրոս Ազարեանի հետեւեալ պայմաններով: Ա. Կանանց հիւանդանոցին անկողնոց միոյն վրայ գրել՝ «Յիշատակ հանգուցեալ Պետրոս Ազարեանի 1906»:

Բ. Բարեկիշատակ հանգուցելոյն գերդաստանին անդամները իրաւասութիւն պիտի ունենան նոյն անկողնոց մէջ հայ կաթողիկէ հիւանդ եւ վկայեալ աղքատ կին մը դարմանել տալու:

Գ. Առաքարկուած հիւանդին ընդունելութիւնը Անկեանցին կանանց համաձայն պիտի ըլլայ, եւ հիւանդը առանց բացառութեան պիտի համակերպի ընդհանուր կանոնաց:

Եւ ըստ այսմ առաջին պայմանը կը կատարեն կանանց հիւանդանոցին Թիւ 5 անկողնոյն սնարը պատկն վրայ քառանկիւնի պղնձէ տախտակ մը դնելով, որուն վրայ դրոշմուած է ինդրեալ վերաառութիւնը, Կորոնն եւ կը գործադրեն նաեւ աստի առ յապա չտալ: Անարատ Եղութեան կարգի մայրպետաց Մըսրըլեան կառկին տոկոսեաց մէկ երրորդը տարեկան սուկի սով. 40 (տես անդ. էջ 210): Վասն զի կը լսեն թէ ժառանգորդներէն մին թընկըտ Եպիսկոպոսի 1000 սուկոյն 600 արդէն տուեր է, մնացածին տոկոսն ալ, կ'ըսեն, տարին սուկի սով. 16 թըն-

կըն ճիւրիկ ճուտուն թող վճարէ, որ նշնպէս
Մըարըրեանի ժառանգորդներէն մին է: (Գւ.
Պար. ասն. ՎՔԶ. ԺԶ. եւ Ս. ՅԳ. Տր. 81:)

Հոգաբարձութեան յայտնած փափաքին
Համմատ Սզգ. Վարչութիւնը Օգոստոսի մէջ
կը նորոգէ Գ. Յակոբ Անկելանոցին կանանց
ինամակալութիւնը, կազմելով Հետագայ ան-
ձերէն

Յիկին Պետրոս էֆ. Գույուճեան Գահերեց

- » Անիկ Պէկ Մըըըը
- » Անտոն էֆ. Աջարեան
- » Յ. էֆ. Պիլէգիքեան
- » Գրիգոր էֆ. Սինապեան

Այս ինամակալութեաց Հաստատութեամբ
այլ եւս շնորհակալութիւն կը յայտնուի Ուռ-
կանչեան Քոյր Երանուհոյ, որ չորս ամբողջ
տարիներ ամենայն սիրով Հիւանդապահի պաշ-
տօն վարելէ յետոյ իր յուսախառութեան վըսյ
լալով կը մեկնի Անկելանոցէն Կոյ. 11ին: Վասն
զի Սամանճեան Ատենապետին մահուամբ ան-
պաշտպան թալով՝ Անկելանոցի ներքին պաշ-
տօնէից թշնամութեան եւ Սզգ. ՎՔԶ. Ժողովոյ
գովանակութեան Հանգիստելով՝ չի կատարուի
իրեն արուած խոստումը: Հետեւաբար իր նախ-
կին Միաբանութեան կը դիմէ որ դարձեալ
զինքը ընդունի, բայց ձեռնուանքն կ'ըլլէ: Եւ
երկու տարի նորիկ կարմախիման կուսանաց
վանքին մէջ իրեւ Տիւր ժամանակ կ'անցնէ: Եւ
այս միջոցին Գաղղաթի Անարատ Եզրութեան
կարգի ազգային կուսանաց Հետ թղթակցելով՝
անոնց ընդունելութեան կ'արժանանայ: Եւ 1908
Ապրիլի մէջ Անկելանոց գալով իր գոյքերը
կ'աննէ, եւ ի Գաղղաթ իր Հայրենիքը կը մեկնի:

1906 Հոկտ. 10, Ս. Յակոբայ Հոգա-
բարձութենէ ներքին կանոնագիր մը կը ներ-
կայացուի Վարչականին քննելու եւ Հաստատե-
լու Համար: Այս ինգրտագր գործադրութիւնը
յուզարեւելով՝ նոյն ամսոյ 28ին Հոգաբարձու-
թիւնը կը կրկնէ իր խնդրքը, որուն Համար
Հետագայ յանձնախումբը կը կազմուի:

- Հ. Եղիա Ե. Վ. Քելճեան
- Գրիգոր էֆ. Սինապեան
- Վիլէն էֆ. Գանապեան
- Միհրան էֆ. Երազեան

Այս յանձնախումբին կը յանձնուի նաեւ
ուրիշ ինգրտ մը ծագած Անկելանոցին Հոգա-
բարձուաց եւ անոր բժշկապետ Գոսպ. Գ. Զո-
հրային միջեւ, որ է անոր 8 ամիս ձրի Եւ-

ուայութեան թողալը իրեւ նուէր նշանակել
Հաշուց մէջ, ինչ որ չենդուռուիր, որով խն-
դրոյն որոշողութիւնը Սզգ. ՎՔԶ. Ժողովոյն կը
ներկայանայ: Յարորդ ամսոյ 10ին ալ Վարչա-
կանէն կը ծանուցուի յանձնախումբին զրկել
օրինակ մը քննադէմ կանոնագրէն, որպէս զի
ինքն ալ քննէ զայն: Այս ներքին կանոնագիրը
սակայն փոխանակ Հաստատուելու Սզգ. Պատ-
րիաբարանի դիւանին մէջ, ինչպէս նախորդ
անգամները, խապտ կ'անհետանայ, որով այսօր
Սզգ. Անկելանոցը չունի տակաւին ներքին կա-
նոնագիր, Հետեւաբար Հոգաբարձուները աղի-
կամի կը կառավարեն զայն, միայն թէ կենսական
խնդրոց մէջ չեն գործեր առանց Սզգ. ՎՔԶ.
Ժողովոյ յայտնի անանութեան:

Յարույս վերջը Վարչութեան շքանք բու-
լբերելով՝ կը վերակազմի, եւ ըստ այսմ ամեն
մասնակի խորհուրդները դադարեալ կը Համա-
բուին, բայց ի Ս. Յակոբայ Հոգաբարձութենէ,
որուն նորէն կը ծանուցուի շարունակել իր
պաշտօնը մինչեւ ցնոր ընտրութիւն, որ Հազիւ
սեղի կ'ունենայ առաջիկայ տարւոյ Օգոստոսի
սկիզբը:

1907, Մարտ 21, Անկելանոցս կ'ունենայ
Դովտ. Գ. Զարֆեանը, մասնագետ, քթի,
կոկորդի եւ ականջի Հիւանդութեանց, որ ան-
ձնուիրաբար կ'ուզէ դաժմանել Ս. Յակոբ դի-
մող Հիւանդները, որուն Հետեւանքը շնորհա-
կալութեան թուղթի կը գրուի Դովտ. Անտոն
Միմիանեանին, որ Անկելանոցի մէջ աշարժու-
թեամբ միայն կը զբաղէր ձրիաբար: Իսկ Դովտ.
Արիսթիդի Պաշային խնդրագիր կ'ուղղուի որ
տարի մ'եւս շարունակէ իր շնորհք տարրու-
ծելու իր ասն մէջ Հիւանդանոցէն զրկուած
խառանիւթները, խուխը, մէջք, արիւնք եւ ապա-
ւառը, որուն Համար կարեւոր գործիները կը
պակսէին դեռ Անկելանոցէն, թէեւ մծ ջանք
ձեռք առնուած ըլլայ զանոց որ առաջ Հայ-
թայիցները (Գւ. Ս. ՅԳ. Տր. 194): Յարորդ
ամսոյն մէջն ալ Դովտ. Խանճեան, օժանդակ
վիրաբուժ Անկելանոցիս, Հետեւեալը կ'ուղղէ
Հոգաբարձութեան:

Տեղեկագիր
վիրաբուժական ծրուին
Ս. Յակոբ Ազգային Անկելանոցի

Մեծարգոյ Տեսաք Անգամը Հոգաբարձութեան
Կոստանդնուպոլսեւ Հաստատուելէ ի վեր
1904 Յուլիս ամսուն էր, որ պատեւ ունեցայ
վիրաբուժական գործողութիւններ կատարել

Ս. Յակոբոս Անկերանցին մէջ նախորդ պատարժան Լոգաբարձութեան հասանութեամբ: Այդ թուականէն ի վեր արտանութիւն ունեցած էի անձնական հիւանդներու հոն աւաճորդել՝ համակերպելով այն հաստատութեան կանոնադրութեան պահանջին, եւ այս կերպով անշատ կայ մը զիս կայած էր արդէն այն գլխութեան յարկին, երբ, Մեծարոյ Տեառք, հասնեցաք զմեզ պաշտօնապէս անուանել տնայական վերաբուժ 1905 տարւոյ վերջեր: Գարս ինձ կը համարիմ որքան այս առթիւ իմ արտազին շարահայտութիւններու յայտնել Չեղբ Լոգաբարձութեան այն վտանգութեան համար որով հանձնեցաք պատուել զիս:

1906 տարւոյն Լաստատութեան մէջ կատարուած վերաբուժական գործողութիւններու տեղեկագիրը պատարածել ինձ յանձնուած ըլլալով՝ ներքեւք, Տեառք, որ ներկայացնեմ Չեղ միւսնամայն 1904—1905 տարիներուն մէջ դարձանած 12 կարեւոր հիւանդներու ցանկը, ինչ որ մեզ համար գիտնական եւ բարոյական մեծ կարեւորութիւն ունին, դիտանալով հանդերձ որ իմ այս բաժնը զուրկ չէ քննադատութենէ, եւ ամբողջ տարւոյ մը վիճակագրին քով պարզ յաւելում մ'է, բայց միւս կողմէ քանի որ ամենքն ալ արձանագրութեան տարակին մէջ ներցած են արդէն եւ տեղեկագրուած, նախամեծք սեպտեմբ բացառաբար զանոնք ալ հոս կցել:

Գարմանած հիւանդներու հետեւեալ կերպով կը բաժնուին:

Արական սեռէ 10, որոնցմէ վերաբուժական գործողութեամբ բուժուեց	7
Առանց գործողութեան բուժուեալ	1
վերաբուժական գործողութեամբ բարւոյրեալ	1
վերաբուժական գործողութենէ վերջը մեռեալ	1
Իգական սեռէ 2:	
վերաբուժական գործողութեամբ բարւոյրեալ, բայց յետոյ ներքին հիւանդութեան մը հետեւանոք մեռեալ	1
12 տարուան օրերոջ մը վերաբուժական գործողութեամբ բժշկուեալ	1
գումար	12

Այս տասներկու հիւանդներէն մեկուն, որոյ փամփշտին մէջ քարեր կային, վեճմաշուք Նաֆիլեան Փաշա, մասնաշէտ միջոյնին հիւանդութեանց, անձամբ եւ կատարելա յաշողութեամբ գործողութիւն կատարեց, եւ հիւանդը բժշկուեցաւ:

Երէքին վնաս Գոկոմ. De Liacombe, Գաղղիական հիւանդանոցին վերաբուժապետը, գործողութիւն կատարեց, որոնցմէ երկուք բժշկուեցան: Առաջին 44 տարեկան այր մարդ մը՝ որ բազուկի եւ գաստի ոսկրածաբար (osteomyélite des os du carpe et de l'avant-bras) ուներ, բազկահաստութեամբ (Amputation du bras) ստիպ մահէ մը պատահեցաւ:

Երկրորդ 22 տարեկան երիտասարդ մը՝ որ ունային խոլլար գեղձագործութեան (Adénopathie cervicale scrofuleuse) ուներ, գործողութիւնով՝ այսինքն վիզի խաղճմուշքը հանելով եւ քերտելով բժշկուեցաւ:

Երրորդ հիւանդ 70 տարեկան այր մարդ մը. սաքք փտած եւ ամբողջ մասնին շնչերակները կարծրացած ըլլալով՝ թէեւ յաջող գործողութիւն մը կրցաւ կրել, բայց յետոյ մեռաւ: Այս շար հիւանդները գործողութենէ վերջը իմ խնայելիս յանձնուեցան, եւ ես զանոնք ամենայն հոգածութեամբ դարմանեցի:

Գալով 8 հաստ անձնական դարմանած հիւանդներու՝ անոնց հիւանդանոց մասած թուականներուն կարգաւ՝ հետեւեալներն են.

1. Արցախանուպոլսեցի երիտասարդ մը՝ որ 7, 8 տարիներէ ի վեր կը տուալաք Hernie entéro epiploécèle inguinal gauche կրուած՝ այսինքն ձախ անկային աղեցփոսնաթփուլութենէ, Bassini ի մէջուտ անուանուած գործողութիւնը կրելով՝ կատարեալպէս բժշկուեցաւ:

2. Տասներկու տարեկան օրերոջ մը՝ որ իւր ծոծրակին վնաս ուներ Գասալին կոչուած (Mal de Pott cervical) հիւանդութիւնը, չէր կրնար գլուխը մ եւ լ կողմ ծռուել, ամենափոքր շարժումը անզգած աստիկ եւ անտանելի ցուերու պատճառ կ'ըլլար, վիզին մինչեւ մէջքը բաժնէ սեղմիրանի (Corset platre) մէջ առնուելով՝ դարման տարուեցաւ: Երկու ամիս ետքը երբ սեղմիրանը վերցուցի. մեր պտտիկ հիւանդին վիճակը գոհացուցիչ ըլլ. եւ երկու ամիս վերջը զինքը կատարեալպէս բուժուած գալով:

3. Երեսուերկու տարեկան այր մարդ մ'էր որ ալ ստամանիկ վնաս շատոց ի վեր Թարախալեց բշտացեալ շարժաբար (Pleurésie purulente enkystée sus-diaphragmatique droite) ուներ, սաք կործրէն վերահաստութեամբ 1 լիտր Թարախ պարպելով՝ քիչ ժամանակուան մէջ բազդ ունեցանք զինքն առողջ առնելու:

4. Աթոսուն տարուան մարդ մը որ ուներ ալ ուստկրի խախտում (Luxation intra-coccoidienne de l'épaule droite) 50 որ իւր արունք անդամուն ձախ յետոյ՝ ողորմելի վիճակի մէջ հիւանդանոց եկաւ, որուն ուստկրը յաղողեցայ շատ գոժուարութեամբ տեղը դնել եւ բուժուել:

5. Գլխի պարզ վէրք ունեցող մը որ առանց գործողութեան դարմանով բժշկուեցաւ:

6. Աթոսուն հինգ տարեկան կին մը որ ուներ բեկումն ձախ սրնային ոսկրներու (Fracture des os de la jambe gauche) սաք սղաք Maison neuve ի մէջ ստով գածի մէջ դրուեցաւ, եւ թէեւ կտորուածը հաստատուն կերպով միացաւ, բայց երկու ամիս յետոյ զըզդային հիւանդութեան մը հետեւանոք մեռաւ:

7. Եփժանասունուհինգ տարուան թիւրք հիւանդ մը՝ որ մայրաբաղապիս նշանաւոր մասնազէտներու կողմէ ներքին գեղեցիկ առանց

արդիւնքի դարձանուած՝ կը տառապէր ձախակոյման վերկոպասային ջրացատութենէ (Névralgie sus-orbitaire gauche) ձարահաս հիւանդ շիր կտրել հանել (Résection du nerf sus-orbitaire externe) առաջարկեցի իրեն, ընդունեցաւ. գործողութիւն կատարելէ վերջ՝ առաջին շաբթուան մէջ զգալի բարոքում ունեցաւ, բայց յետոյ ջրային ցար աւելի վերջ վերադարձնուեցաւ:

Ց. Ցեռաստութենէ տառապող (Hemorroides) 53 տարեկան հիւանդ մը որ յառջ գործողութեամբ բժշկուեցաւ:

Վերոգրեալ անցելութիւններէ կը յայտնուի ուրեմ թէ Դոկտ. De Lacombeի գործողութիւն բրած երբք հիւանդներէն մին միայն մեռաւ, ինչպէս նաեւ մին գործողութիւն կողմեր 7 հիւանդներէն, ինչ որ շատ բաշխարկական եւ մտիթարական է, նկատուածնով որ մեռեալ այդ երկու հիւանդներուն մահուան պատճառը ոչ թէ կատարուած գործողութիւնները եղան, այլ՝ նորահաս տարբեր հիւանդութիւններ:

Այժմ անցինք Անկիւնոցին 1906 Յուլուար 1էն սկսեալ մինչեւ 1906 Գեկտ. 31 տարուան անցկազրին:

Եկէ տարուան մէջ դարձանուող հիւանդաց ընդհանուր գումարն է 48, որոնք հետեւեալ կերպով կը բաժնուին:

Արական սեռ	35
Իգական սեռ	9
Արւ. տղայք	2
Օրիորդք	2

Այս 48 հիւանդներն են

Վերաբուժական գործողութեամբ բժշկեալք	27
Առանց գործողութեան բժշկեալք	9
Գործողութեամբ բարորեալք	4
Առանց գործողութեան բարորեալք	4
Գործողութենէ յետոյ մեռեալք	3
Առանց գործողութեան մեռեալ	1
գումար	48

Այս 48 հիւանդներն 5ին վրայ միայն Դոկտ. De Lacombe գործողութիւն կատարեց, 1ին ալ մահադէտ Դոկտ. Ջարֆճեանը, մնացեալներուն գործողութիւնը եւ կատարեցի առանց արձակութեան բժշկական Դոկտ. Ջահրպի եւ վերաբուժապետ Դոկտ. De Lacombeի, եւ բացառաբար երբեմն ալ Դոկտ. Արզումանեանի, բայց միշտ Դոկտ. Ֆինճանճեանի օգտակար ընկերակցութեամբ: Պարտ անձին կը համարիմ հոս իմ խորին երախտագիտութիւնս յայտնել ասոնց ամենուն յատկապէս:

Հարկ է յիշել նաեւ թէ անցկազրին մէջ երեցած հիւանդներն շատ ունեցած ենք շատ մ'ալ գուրգեն եկող ու դարձան կող ոտքի վրայ հիւանդներ, որոնց վրայ զանազան գործողութիւններ կատարելով՝ ամբար կնք տուներին, եւ որոնք հարկ եղած ասոն հիւանդանոց յաճեալով դարձանուած են մեր կողմանէ: Ասոնց մանրամասն անցկազրեր հակառակ մեր

շանքին շրջանք դժբախտաբար պատրասեալ, որովհետեւ այդ կարգի հիւանդներուն կանոնաւոր ծրագրակազրութիւն ունենալ դժուար եղաւ մեզ:

Վերոգրեալ անցկազրին վրայ ընդհանուր ախտակ մը նեխելով կը տեսնաք թէ գործողութիւն կող 3է հիւանդներէն 3 հատ միայն մեռած են. Չը Դոկտ. De Lacombeի գործողութիւն բրածներէն, 1 հատն ալ մեր գործողութիւն բրածներէն: Եւ եթէ անոնցմէ զեղծնք այն մէջ հատն ալ՝ որ Դոկտ. Ջարֆճեանի գործողութեամբ բուժուած է, կը մնայ մեղծ ճիշդ 30 հիւանդ վերաբուժական գործողութեամբ բժշկուած կամ բարորեալ: Ինչ որ խիտ փայլուն յաշիւղութիւն մը կարելի է նկատել:

Այս յաշիւղութիւնը որչափ արդիւնք է տարուած նախընտրուած, կը խտտովանիմ թէ նոյնչափ բարապէք է նաեւ Ս. Յակոբայ Անկիւնոցին մէջ սիրող բժշկական համբարունք եղբայրակցութեան, որ գէր ի վերջ է ամեն բժշկական հոգածութենէ, եւ առանց որոյ ո՛րեւէ հասարակական հիւանդանոց կամ բուժարան չի կրնար կայուն ընթացք մը ունենալ:

Անկիւնոցը ըզգացուած վերաբուժական կատարելութեան հասցնելու համար, աւելորդ է կրելել՝ թէ հարկ է շատ մը նորանոր միջոցներու: Այս միջոցներու գլխաւորն է նեխալայ գործողութեանց յատուկ արտք մը առանձին սենեակներով: Այս մասնաւոր շէնքին շատափոյթ կուտուցման համար շեմ բարձրանալու միայն ըլլալով առ այժմ՝ կը փութեմ արդ իմ խորին երախտագիտութիւնս յայտնել Ամենպատիւ Գերբերանիի Հօր մեր Տեառն Տեառն Տապալուեան Արքայան կաթողիկոս Պատրիարքին, որ իր հայրական բարեկեամ ջանիք առտարած է միշտ Անկիւնոցին, ինչպէս նաեւ Չեղ, մ բարջնան Հոգաբարձու Տեաքը, որ Չերթանկազին ժամերը դժհեղով՝ ամեն գովելի անձնութիւններն եւ ծառայողութիւն շէք ինչպէր յարածամ Անկիւնոցիս շաղապայման:

Ի գիճոց համայն պատասխաբեալ հիւանդաց ընդանոցէք, Ենճարգլ Տեաքը, խորին յարգանքն եւ երախտալարա զգացմանց հաւատարմքն, որով մեամ Չեղք:

Բանակաթի, 24 Ապրիլ 1907

Դոկտ. Խանճեան
Օժանգակ Վերաբուժ Ս. Յակոբայ
Անկիւնոցին

Հոգաբարձութիւնը Մարտին մէջ նախորդ 1906 տարուայ հաշիւները ներկայացնելով՝ բնութիւնը Ազգ. վճռ. ժողովէն Սագլը Արմենակ եւ Լաշեան Մանուէլ-է-Փենտինբուրն կը յանձնուի: Ասոնք շարաթ մը ետքը Մարտ 30 պատասխան կը բերեն Պարլումեան թէ՛ հաշիւները թէ՛ բարեկարգ են, բայց որոշ գա.

դափար մը կազմելու համար ելեւմտից վրայ պէտք է բուն հաշուետուամարները ըննել եւ այլ օժանդակ տեսողները, որպէս զի հասկցուի՝ թէ մէք եւ կեմտից արհիւրները, եւ ի՞նչ ծախք կը պահանջէ արդի վիճակը: Ար յարն նաեւ որ արտաքայ կարգի դրամական նուէրները պէտք չէ գործածել աւօրեայ ծախուց: Աւստի կ'որոշուի այս իմաստով նամակ մը գրել Հոգաբարձութեան: Քննել տրուած հաշուեցուցակը Անկեյանոցին մար տուամարին եւ օժանդակ տեսարներուն հետ համեմատելով՝ իրենց տեղեկագիրը կը մատուցանեն Ազգ. վարչութեան, որ Մայիս 16 նիստին մէջ կը կարգադրուի եւ ասեմագրութեան մէջ կ'արձանագրուի, որուն իմաստը հոս ամփոփել կը փութանք: — Ս. Յակոբ Անկեյանոցին 1906 տարւոյ մատակարարութեան եւ ելեւմտական վիճակին վրայ յասակ գաղափար մ'ունենալու համար, կ'ըսեն հաշուեքննիչները, ներկայացուած հաշիւներէն զամ՝ պէտք է բուն մատակարարութեան հաշիւ մը ներկայացուի, որ մտից կողմէ ցուցնէ 1906 տարւոյ սովորական եւ գանձուած եկամուտը՝ յետամաց ասնելիքներուն գանձումներէն հանգերձ. իսկ ելից կողմը սովորական ծախքին: Բացառիկ հանգամանք ունեցող եւ աւօրեայ ծախուց համար շեղող նուիրատուութիւնները եւ անոնց վերարբերել ցկեանս ամսականները՝ հաշուին երկրորդ մասը պէտք է որ կազմեն, այնպէս որ ամեն մէկ մասին բացը կամ կ'աւելորդ եկամուտը տեսնուի, եւ որ եւ մուտք կամ ելք այս հաշիւներէ դուրս մնայ: Ար փափաքուի նաեւ որ ամեն տարւոյ սկիզբը Անկեյանոցին նախատեսեալ ելեւմուտքն (Budget) ներկայացուի, այնպէս որ տարւոյն վերջը տրուելիք մատակարարութեան հաշիւը այս պիւնաճէին կիրառութիւնը ըլլայ:

Ազգ. վրչ. ժողովը վերոնշանակեալ իմաստով կը գրէ Անկեյանոցի Հոգաբարձութեան, որ 5 Յունիս իր Ատենասպետին միջոցաւ կը պատասխանէ թէ՛ անհետք է ներկայացուած հաշուց գրութեանէն տարբեր հաշիւ մը պատրաստել, սակայն բոլոր տուամարները վարչական ժողովոյ արամագրութեան ներքեւ ըլլալով՝ կ'ընայ երբ ուզէ հարկ երաժ տեղեկութիւններն ստանալ: Ատոր վրայ ժողովն կ'որոշէ չվաւերացնել հաշուեկէտը մինչեւ ցընարութեան նոր Հոգաբարձութեան, եւ յանձնել անոր խնդրուած թնով հաշուեկէտը պատրաստելուն գործը, եւ ներկայացնել վարչականին ի հաստատութիւն: (Դւ. Պար. ասն. վրչ. 2.)

ԺԹ.

ԺԶ. ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԻՒՆ

1907—1908

Հէօսեան Անտոն Ատենասպետ
 Բիլճեան Հ. Նոյն ծ. Վ.)
 Միարան Անտոնեան } Խորհրդակալներ
 Դաուարաջ Արամ }
 Գրլմը Վիլէն }
 Սոկեան Գրիգոր Ատենասպետ
 Բէքմէզ Էտուար Դանասպետ
 Մանաս Էտուար Հարոակալ

Օգոստոսի 24 էր երբ Հոգաբարձութիւնս կը գումարէր իր անաջին ժողովը, ուր ներկայ կը գանուէին իր նախորդէն նաեւ Մահճուկեան Պետրոս եւ Շէրպէթճեան Պողոս, որ իրենց յաջորդաց կը յանձնեն Ս. Յակոբ զիւանը՝ պահելով միայն նորակառոյց յարկարածին մատակարարութեան հաշուետուամը իրբու անգամ շինութեան յանձնախմբին, որուն ձեռնհասութիւնը պիտի զօրէ, կ'ըսեն, ըստ տնօրէնութեան Ազգ. վրչ. ժողովոյ, կառուցման աւարտումէն ետքն ալ մինչեւ ցարդողական հասուցումն անոր պարտուց:

Այս Հոգաբարձութիւնները հազիւ թէ կը ստանձնեն Անկեյանոցին հոգը, ահագին մտատանջութիւններու կը հանդիպին. վասն զի չափազանց կը ներկն զիւրմը Պետութեան հարկահանները, որ յետամաց տուբերը կը պահանջեն, որով հետագոյ իմաստով 1907 Սեպտ. 21 կը գրեն Ազգ. վարչութեան՝ թէ Անկեյանոցին բարդեալ արոց խնդիրը որ բան զօր սուր հոգաբարձութեան կը յայտարարեն թէ ի պաշտօնէ հրաման ունին վարձակալներուն ամսավճարները գրաւելու, եւ թէ զայս ի հարկէ պիտի գործադրեն եթէ իրենց պատկանեալ պաշտօնարանին հակառակ հրաման մը չգայ: Ազգ. վրչ. ժողովը այս մասին որոշողութիւն մը տալէ առաջ կը յանձնարարէ իր անդամներէն Հիւրմիւզ Արտաշէսի տեղեկանալ Ազարեան Յովսէփ էֆէնտին թէ իր միջնորդութեան արոց մասին նորին ՊՆՏափառութեան մատուցուած արհեստագրին վրայ ի՞նչ պատասխան ընդունած է: Հիւրմիւզ էֆէնտին յաջորդական նիստերուն մէջ կը յայտարարէ ի դիմաց Ազարեանի թէ ձեռնհաս իշխանութեան բացառիկ թոյլտուութիւն եղած է Ս. Յակոբայ արոց մասին եւ հրահանգ տրուած որոնց անկ է՝ ձմրան եղանակին շնորհը Հոգաբարձութիւնը: Իսկ Ազարեան

Տրիտակի վեց տուներուն համար խոստացած է, կ'ըսէ, յիշեալ Յովսէփ էֆենտին իր բով գտնուած պահեստի գումարէն մաս մը յանձնել Ս. Յակոբայ պայմանաւ որ իր հօր Տրիտակած վեց տուներուն բարգեալ արոց յատկացուի: Ասոնց ամենքը անհիշապէս կը գրուին չոգաբարձութեան:

Այս պարագաներուն մէջ Անկելանոց կ'ունենայ արքայազուն այցելու մը, Սարսոնոյ թագաւորին եղբայրը Ցէր Մարտիկիանոս, հայերէնի սահաւ ինչ ծանօթ քահանայն, որ ներքին տեսուչ Միքայէլ Չօպանեանի ընկերակցութեամբ Անկելանոցիս բոլոր յարկերը կ'այցելէ, եւ արանց Անկելանոցին պարտեղէն անցած պահուն, ուր իրերը անզգար կը ձեմնն, երբ կը տեսնէ որ կոխած գետինը գերեզմանաքարեր մածնած է, իր ընկերին դառնալով կ'ըսէ. — Ափսոս չէ ասոնց՝ ձեռքովը քարերը ցուցունելով... ասոնց իւրաքանչիւր գերեզատանի մը յիշատակարան է... կարելի չէ արգեպը զատնք պատերուն տակը ջից դնել, որ մաշելու վտանգէն զերծ ձեան: Այս եւ ասոր նման խոսակցութեամբ գրասենեակը կը հասնի, ուր ինքնագիր մաղթանք մը թողով՝ կը մեկնի, որուն փորձուած նմանահանութիւնն է հետեւեալը.

ԱՆԿԵԼԱՆՈՒ Կ. ՀԱՐՈՑ
 P. 684-708
 1900
 HOPITAL ARMEINIEN-CATHOLIQUE
 SQUARE MASCOP
 PANCALDI

*Տոմարեւորից Բրայտի, ինչ քան տեղաւոր
 օտարներու անտարբեր, վարձու սրբա
 տարաւոր քաղաքներու Յ. Քրիստիանի Գ.
 անկարգ ջիւղերին.*

*Գրող Կ. Կրկնայ Երզնայի սրբաւ տեղաւոր
 սեղանայ ստիւղաւորայ արտի ք կուսակի
 ստիւղայ ջիւղերի ք անկարգ քաղաք
 քաղաքայ սրբաւ տեղաւոր քաղաքներու
 քաղաքայ ջիւղերի ք անկարգ քաղաք
 14. 02. 1907.*

Ընթերցումը՝
 Մարտիկիանոս, իշխան թագաւորու-
 թեան սարսոնո, վարդապետ աստուցաբանու-
 թեան ի Փրիպերկիս ի աշխարհ շերտերիս.

Ցէր Աստուած օրնեցի ստուն ստին օման-
 կանց սէի. անթեպ արք եւ կանախք սարաւ հի-

մարք եւ սամնեսեան որք սպասաւորին սնօսա
 բարբեհտութեամբ սրբա Յակոբայ մցնած Հայ-
 րապետի

14 Օգոստոսի 1907

Եթէ այս արքայազուն այցելուն ցաւ յայտ-
 ներ է գեանսման գերեզմանաքարերուն վրայ,
 որոնց վերտառութիւնները տակաւին չեն մաշե-
 եւ կրնան ապահովել, ի՞նչ պիտի ըսեր արգեպը
 եթէ գիտնար որ զինքը Անկելանոցին դռնէն
 վար ինչեցնող եւ աւանդատուն հանող աստի-
 ճանները գերեզմանաքարերէ շինուած են: Ի՞նչ
 պիտի ըսեր արգեպը եթէ իմանար որ Ս. Յոհան
 Ոսկերբան Եկեղեցւոյ շինութեան պէտք եղած
 մարմարիտը Ս. Յակոբայ գերեզմանատունը
 հայթայթած է, զոր կ'աւանդեցը ականատես
 վկայութեամբ եւ ի լրջո՞ որ Մամիսիոյ՝ «Ան-
 րատ Յղութիւն Ս. Աստուածածնայ» եկեղե-
 ցւոյն ալ Պալլադի Սգգ. գերեզմանատունը:
 Արդարեւ տեսուր է այս ամենը, բայց ստույգ, եւ
 հետեւեալ ժամանակին տգիտութեան, որով չեն
 անման ուրիշ հասարակութիւններն ալ:

Ազգ. վարչութեան ասուրջ 1907 Հօկա.
 24 գումարեալ արտաքոյ կարգի նստին մէջ,
 ուր հրաւիրուած էին Ս. Յակոբայ Հոգաբար-
 ձուներն ալ, ժողովական անդամ՝ Արտաշէս
 Հիւրբիւլ լուսար ժողովոյն կը յայտարարէ
 ուրախալի լուր մը: «Վսեմախոյ Յովհաննէս
 էֆ. Ալաշիբաթիէ արածնեալ եմ, կ'ըսէ, յայտ-
 նելու թէ Նորին Վսեմութիւնը 6000 սամ. ոսկի
 կը կատէ Հայ կաթողիկէ Հասարակութեան
 պայմանաւ որ այն գումարով Ս. Յակոբայ մու-
 ընալ Սա Տղոյն աղատ մէկ մասին վրայ յարկու-
 բաժին մը կառուցուի ի յիշատակ իր վաղամեակի
 որդւոյն Ներսէսի, եւ նոյն յարկաբաժնին զուտ
 հասոյթն որդուելի համեմատութեամբ բաժնուի
 Ս. Գրիգոր Լուսաւորիչ Ուսումնարանի եւ Ս.
 Յակոբայ Անկելանոցին մէջ: Ար յարկու նաեւ
 որ Նորին Վսեմութիւնը իրեն եղած այլեւայլ
 առաջարկութիւնները քննելով՝ նախամեծար
 համարած է բացարձակ ձեւաւ: Եւ եթէ ո՞ր եւ է
 պատճառաւ վարչական ժողովոյ սոյն առաջար-
 կութեան չհասնի, Նորին Վսեմութիւն մտա-
 գիր է նոյն գումարով ի յիշատակ որդացեալ
 որդւոյն Ներսէսի Ս. Յակոբայ Տղոյն վրայ արդի
 պահանջմանց համաձայն աղքատանց մը եւ
 յիմարանց մը կանգնելու: Այս ուրախալ յայ-
 տարարութեան վրայ ժողովական միահամուռ
 կը ինքնուր չոգեւոր Յիրոյմէն օրհնագիր մը
 զըկել այս աղքատասեր անձին նոր բարերարու.

Թեան համար, եւ շնորհակալեաց արուայայտութիւններ կ'ընեն աւետարներ Հիւրաբիւզ էֆ.ի:

Այս կտակին իրականացումը սակայն այլեւայլ երեւոյթներ կ'առնու: Նախ կը մտածուի այս յարկարաժխնը շինել Ս. Ծակորայ մատրան վրայ բաղաւորութեամբ անոր գաւթին, ըովն պարտէզին մէկ մասին եւ Թիւ 4 կրպակին ընդ ամենը 600 քառակուսի կանգուն հողի վրայ: Կատարարը երբ կը լսէ թէ մատուռը շէնքի տակ պիտի մնայ, 1000 օսմ. սուի եւս կ'աւելցնէ իր կտակին վրայ, որպէս զի մատուռը ուրիշ տեղ մը շինուի: Վաղ ընդ լոյժ յանձնախուսմբ մը կը կազմուի գործին փոսակ անձինքներէ, Ս. Ծակորայ Հոգաբարձուներէն, Աղգ. Վրջ. Ժողովոյ անդամներէն, բոյիշման եւ Խորատարակներէն, խնդիրը տեղւոյն վրայ քննելու, երկիրը շահիւրու եւ յատկաձեւը պատրաստելու համար:

Մինչ Աղգ. Վարչութիւնը այս գործերով կը զբաղէր, Ս. Ծակորայ խորհուրդին տանտպետը հրատարական կը գրէր նոյն տարի 15/28 Նոյ. իր վստահողութիւնը պատճառելով, որ Թաւազանէտ օր մ'եւորը գումարեալ Աղգ. Վրջ. Ժողովոյն մէջ կարգացուելով՝ կ'ընդունուի, եւ ի գիր ցաւ կը յայտնուի հրատարակելոյ: Զարմաթ մը ետքն ալ Հոգաբարձութեան անդամներէն Գրէշը Վիշէն, Գառաքաշ Արամ եւ հետտար Գառաւ էֆ.ները Աղգ. Վարչութեան կը ներկայանան, եւ 22 Նոյ. Թուականաւ կրկին նամակ կը մատուցանեն, որոնց առաջինում իրենց պաշտօնակիցներէն քիչեան 2. Եղեա Ծ. Վ.ը օտժամեայ ասեմակեա կը խնդրեն. երկրորդում ալ՝ Անկէանոյցիս դրամական անձուկ վիճակը յայտնելէ ետքը՝ կը խնդրեն 6% վից առ հարիւր տոկոսով 270 օսմ. սուիւոյ փոխառութիւն մը կնքել օսմ. Գրաստանէն անոր ըով ի պահ գրուած օտմանեան արժեթղթով վրայ: Վարչականը նկատ անելով այս կրկին կետերուն տնհրատեշտութիւնը՝ երկուքն ալ կ'արտօմէ, եւ գրիչ կը խոստանայ յիշեալ դրամատան, անօրոշութեան եւ գերեանին: Բայց քիչ ետքը այս վերջինս ալ կը հրատարի Սապպառեան Գ. Պատրիարքին հետ հաշուական խնդրոյ մը մէջ տարակարծիք գտնուելով, ինչպէս նաեւ Աղգ. Վրջ. Ժողովոյ անդամակցութենէն: Եւ ըստ այսմ՝ Ս. Ծակորայ Հոգաբարձութեան Ատենապետին աթոռը պարագ մնալով՝ կը բազմի անօր վրայ Արամ էֆ. երաժեան հաստնութեամբ Վարչութեան, եւ Թերզիպաշեան Գեորգ Ծ. Վ.ը եկեղեցական

անդամ կը կարգուի: Երամեան կը փութեայ պաշտօնի վերակոչել Գոկոս. Մ. Զարգարեան Անկէանոյցի նախկին վերաբաժնի, եւ նա կ'ընդունի պայմանաւ որ իր մասնաճիւղին վերաբերեալ ամեն գործ իրմէ կախում ունենայ: Ասի լսելով՝ Գոկոս. Խանձեան կը հետանայ Անկէանոցէս:

Այս միջոց ժամանակին մէջ Ալաշկերտեան Յովհ. էֆ.ի կտակին համար պայմանագրութիւն կը ստորագրուի յանուն Հայ կաթողիկէ Հասարակութեան իր եւ Սապպառեանի մէջ իրեւել գրուի ազգին 1907 Գեկոս. 12/25 Թուականաւ, ճշգրտով բարերարութեան նպատակը, կառուցանել յարկարաժխն մատակարարութեան կերպը եւ հասցի ընդ մասն եղանակը: Ծանձնախուսմբ ալ Արամ Գառաքաշ Զորատարակներին յատկաձեւ մը պատրաստել տալով՝ Աղգ. Վարչութեան կը ներկայացնէ հանդերձ յանձնառութեան տեսքով (cahier de charge).

Խնդիրը այս պարագաներուն մէջ էր երբ իրաց երեւոյթը յանկարծ կը փոխուի: Ս. Ծակորայ մատրան գեախնը հիւանդանոցին մտնութեան պատճառաւ առողջապահական տեսակետով՝ Անկէանոյցի բժիշկ Գոկոս. Գ. Զահրապի անյարմար կը տեսնուի, եւ նախաձեռնար կը համարուի Ոսկերեան եկեղեցոյ երկու քարտէս տունները, որ արդէն տարին առ ընդ 250 օսմ. սուի վարձը կը բերէին, քանդելով անոնց հողին վրայ շինել մատարեալ յարկարաժխնը: Ասոր համար ալ հարկ կ'ըլլայ Ս. Ծակորայ Հոգաբարձութեան՝ Ոսկերեանի Թաղախոտութեան հետ համաձայնել, ըստ այնմ որ այն տուններէն մին անոր յատկացուած էր ի 1889 Բարեյ. Աղարեան Գ. Պատրիարքին հետ հաշտութիւն խոսելէն տարի մ'ետքը, թէ ինչ կերպով կ'ընդ կրնար արդեօք շինել ասանց Ոսկերեանի ընկերակցութեան յիշեալ երկու տուններու հողին վրայ մտադրեալ յարկարաժխնը: Խնդիրը հիմնական կերպով քննելու համար նախ սեպակահանութեան խնդիր կը յարուցուի, այսինքն թէ որոնք կը պատկանի արդեօք խնկապէս այն շէնքը, որուն համար հարկ կ'ըլլայ Ոսկերեանի Թաղախոտութեան բոլոր պաշտօնակրերը գրասեղանի վրայ հանել, որոնց ամենքն ալ Բարեյ. Աղարեան Սահի. Գ. Պատրիարքին վճիռներն էին, արուած Աղգ. Վրջ. Ժողովոյ հաւանութեամբ, զորս տեսնելով Ծանձնախուսմբ անդամները՝ կը պատկանին անոնց առջեւ առանց անդադարաւանալու երբէք թէ այդ վճիռները որ

վաւերացրոց վրայ հաստատուած են: Այս սեպ-
 ճակնտութեան ինքիրը գուցէ հետեանք ըլլայ
 այն հրատարակութեանը որ այս պահուստեան
 նուեցան ՃԻՐԻՏԻԻ ԸՍՐԲԻԷ օրաթերթին
 7009 թիւին մէջ իրի մէջընուզ վերնագրով,
 եւ ՄԵՃՄՈՒՈՒ ԱՆՊՐԵ լրագրոյն 4657 եւ
 4675 թիւերուն մէջ Սահիպի քիմ տիր եւ
 Քաջըխանէ Տանկը իտարէյէ տախիլ տիր
 մակագրերու ներքեւ:

Թաղականները մեք ընկերակցութենէ
 հրատարած կը համարուինք, կ'ըսեն, եթէ
 Emphythéoseի (վարձակալութիւն երկար) գրու-
 թեանս Ս. Յակոբայ վարձներ այն տունը տարին
 300 օսմ. ստիմով, ըստ այնմ որ այն շէնքը
 մեզի համար 6000 օսմ. սակի կ'արժէ, որուն
 150 սակի միայն կ'առաջարկուի Հոգաբարձու-
 թեննէն: Այս ամենը ըսելով Ազգ. վըք. Ժողովը
 ինքրոյ տակ եղած տունը գնահատուելու ար-
 ժեցնել կը խորհի, որուն վրայ նախագահ պա-
 արիարք Հայրը ետքը կը փակէ ըսելով "Ի՛նչ
 պէտք է օտարներու դիմել... յայտուեցաւ որ
 ինզիրը սկզբամբ ընդունուէր եւ գրամական
 կէտին միայն կառչեր է. ուստի ես իրեն Պա-
 արիարք եւ Միւթէվէլլի ամեն Ազգ. ընչից կը
 ստանձնեմ Ս. Յակոբայ Հոգաբարձուաց եւ
 Ս. Յոհան Ոսկերեբան եկեղեցւոյ Թաղականաց
 մէջ համաձայնութիւն գոյացնելու գործը, եր-
 կու հաստատութեանց մէջ անշուա իրաւախոհ
 մ'ըլլալով:"

Երբ Ազգ. վարչութիւնը սրտի մտօք
 կ'աշխատէր Ալեհակեան կապին գործա-
 դրման, Հոգաբարձութիւնն ալ Ս. Յակոբայ
 մէջ հետագայ անօրինութիւններն կ'ընէր: Գոկո.
 Պաղտասար Յովհաննէսեան յիմարարութիւն ամ-
 սական Չ օսմ. սակի կ'որոշէր իրեն ճամբու
 ճախը: Արտաքոյ կարգի վերջերու պատաստուել-
 ներուն համար ալ՝ վճարում մը: Անկէլանոցիս
 մէջ վարձանկելոց արժէքաւոր գաղչեիրուն ընչա-
 համարը շինելով՝ Ազգ. Պաարիարքարանը զրկել,
 որպէս զի ժառանգորդները գտնէ եւ յանձնէ:
 Կ'որոշէր նաեւ ինզիրը Ազգ. Պաարիարքարանէն
 ծանուցանել ոստիկանութեան, որպէս զի Ս. Յա-
 կոբ չըզկէ գաւառներն եկող աղքատ ճամ-
 բորդները, բայց եթէ զանոնք միայն որ հիւանդ
 են եւ ունին ի ձեռին բժշկի մը վկայական եւ
 այն ոստիկանի մը ընկերակցութեամբ: Իսկ հիւ-
 ճախաւորները բորբոքի մերժել, ըստ որում՝
 հակառակ է հիւանդանոցիս կանոնաց: Այս կար-
 գադրութիւններէն քանի մ'օր ետքը Հոգա-
 բարձութիւնը հաւաքաբար կը հրատարի 1908

Օգոստոսի մէջ առանց հասնելու իր նպատակին,
 որպիսի է նոր յիմարանցի մը շինութիւնը,
 որուն համար բանընթացին պարտեզպանը
 վտարած եւ անոր տնայն ալ քանդել տուած
 էր, բայց կը ձախողի, մանաւանդ թէ 638 օսմ.
 սակի եւ 64 դահեկան ալ բաց կու տայ (Գւ.
 Ատ. 8փ. 234) իր կարճատեւ պաշտօնավարու-
 թեան մէջ, որուն Տաշիւր ապա կը մատուցանէ
 Ոսկեան Գրիգոր էֆ. առժամայն մատակարար:
 Բայց այս առժամուութիւնը գրեթէ 4 ամիս կը
 տեւէ, վասն զի այն ժամանակները Ազգ. Պա-
 արիարքարանի գործերը խառնափոխօր վեճակի
 մը մատուուած էին, խորհուրդները ջրուած, Ժա-
 Ղվուրջը Սապպաղեանն է, Պաարիարքէն Ազգ.
 Երեմիոսեանց նոր ընտրութիւն կը պահանջէր,
 նախկինը լուծակալութեան արդիւնք նկատելով:
 Որով հազիւ թէ Ս. Յակոբայ Հոգաբարձու-
 թիւնը Գեեկեաների սկիզբը կը վերակազմի
 նորընտիր Ազգ. վարչութենէ:

(Ըստ անկէի) 2. ՆՍՍԱՆԱՅ ՍՐԱՊԾԱՍ
 Միաբան Անտոնեան



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

**ՆԵՐՍԵՍ ՀՆՅՈՒՐԴՔԻՆ ՄԾԵՐ ԵՆԿԵՆՈՒՅՆ
 ՀՅՅՐԵՆ ԶԵՆՈՒՄԻՆ ԾՈՒԾԵԼ**

Տարիներով յառաջ դերլայ Հայաքաղքին
 Ս. Երրորդութեան մայր եկեղեցւոյն մատենա-
 գարանը կարգի գրած տանն, աչքէ անցուցիք
 հոն սեղի Հայ ձեռագրներն եւ անոնց վրայ
 գրեցիք համառօտ տեղեկութիւն մը:

Վերջնս նորէն աչքէ անցուցիք այն ձե-
 աագիրներով՝ մէկ կողմանէ անօր համար, որ
 անոնց վրայ աւելի ճիշդ տեղեկութիւն ունե-
 նանք ու մէկալ կողմանէ անօր համար, որ եթէ
 պարագաները ներքեւ՝ շարունակներ քանի մը
 ատրի յառաջ սխուտօք:

Աս բանս այնչափ աւելի բաղձացիք գոր-
 ծադրել, որչափ որ ասով թէ խնայգրութեանն՝
 ստոր նկատմամբ եղած յանձնարարութիւնը կը
 կատարուի, թէ միշտեւ հիմակ անձանթեղ եղած
 ու փոշիներու տակ մնացած ձեռագրներուն
 վրայ աւելի տեղեկութիւն ու գաղափար կ'ու-

1 ՅՍՆ Հանդէս Ամսօրից 1890, Թ. 1, էջ 20: —
 Գարձեւ: "Գրականութիւն հայոց մտաբանութեան,
 վիճակ 1896, էջ 318-348: